ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ 1/8

Ք. Երևան 30 սեպտեմբերի 2021թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2021/2022 ՈՒՍՏԱՐՎԱ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՉԱՓԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 49-րդ կետի 5-րդ և ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգի 2-րդ կետի 5-րդ ենթակետերով՝

ԵՊՀ գիտական խորհուրդը որոշում է.

1. Օտարերկրյա ուսանողների օտարալեզու ծրագրերի վարձաչափերը մեկուկես տարվա համար սահմանել համապատասխանաբար բակալավրիատում 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար), իսկ մագիստրատուրայում 1.600.000 (մեկ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:
2. Օտարալեզու ծրագրերով կազմավորվող մասնագիտական խմբերում ընդգրկված ոչ բավարար քանակով ուսանողների դեպքում նշված վարձաչափերը կարող են բարձրանալ մատուցվող ծառայության ինքնարժեքի ծախսերի ապահովման նպատակով:
3.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ